քարը ֆեոդալական Հայաստանի արվեստի լավագույն նմուշներից մեկն է (արձ. 155)։

1217 թվականի մի արձանագրության մեջ կարդում ենք, որ Կյուրիկյան թագավորների երբեմնի մայրաքաղաք Լոռին ևս պատկանել է Սանահնի վանքին։ Աշոտի որդի Գորգին իր որդիների հետ միասին Սանահնի վանքին է նվիրել Լոռին՝ յուր շահովն ու վնասովը և խոտհարքի տեղ, և փոխարենն ստացել է խաչգյուտի տոնը։

Սանահնի նշանավոր վանահայրերից մեկն է եղել Աբասի որդի Գրիգորը։ Նա ունեցել է բազմաթիվ ձեռագրեր։ 1217 թվականի մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Սանահնի վանքին է նվիրել 13 ձեռագիր գիրք (արձ. 33)։

Այս Գրիգորը Սանահնում առաջին անգամ հիշատակվում է 1215 թվականի արձանագրության մեջ իբրև առաջնորդ, բայց 1219 թվականին նրա առաջնորդությունը Սանահնում ընդհատվում է։ Նա այդ թվականին տեղափոխվում է Հառիճա վանք և այնտեղ վանահայր է դառնում։ Այդ մասին տեղեկանում ենք 1219 թվականը կրող Հովհաննես գրչի ձեռքով գրված մի հիշատակարանից։ Այնտեղ գրված է՝ «Յառաջնորդութիւն Գրիգորոյ վարդապետիս, որդւոյ Աբասայ, որ եկն ի սուրբ ուխտէն Սանահնէն, առաջնորդ մաւրս լուսոյ և սպասաւոր»[1]։

Գրիգորի առաջնորդությունը Հառիճա վանքում երկար չի տևում, նա նորից վերադառնում է Սանահին և այնտեղ մեռնում։ Նրա գերեզմանը գտնվում է վանքի բակում և տապանաքարը թեև արձանագրված է, բայց թվական չունի։

Հառիճա վանքը գնալուց առաջ Գրիգորի անունով եղած վիմական արձանագրությունները պատկանում են 1215 (արձ. 155) և 1217 թվականներին (արձ. 33, և 49)։ Դրանից հետո վանքի արձանագրությունների մեջ իբրև առաջնորդ հանդես է գալիս Զաքարեի և Իվանեի քեռորդի Հովհաննեսը, որի արձանագրությունները վերաբերում են 1221-ից մինչև 1225 թվականներին (արձ. 56, 15, 174, 139), որից հետո՝ 1229 թվականից սկսած (արձ. 52. 58), նորից Գրիգորն է հանդես գալիս իբրև առաջնորդ՝ մինչև 1234 թվականը (արձ. 127)։

Այս բոլորից եզրակացնում ենք, որ Գրիգորի վանահայրությունը Սանահնում տևել է 1215 թվականից մինչև երեսնական թվականները, 1219-ից մինչև 1225 թվականների ընդմիջումով, երբ նա եղել է Հառիճա վանքում։

Աբասի որդի Գրիգորը հեղինակ է մի խիստ ուշագրավ աշխատության, որ «Պատճառ լայն և նուրբ գրեանց, առեալ ի հարցն սրբոց և ի վարդապետաց, և ի մի հաւաքեալ և հոգացեալ մեծ բաբունապետին Գրիգորի, որդոյ Աբասայ» վերնագիրն ունի։

Այս գիրքն իրենից ներկայացնում է մի փոքր հին և նոր կտակարանների բոլոր գրքերի ծագման և նշանակության մասին համառոտ ծանոթությունների, որ կարող ենք այժմյան հասկացողությամբ ներածություն կոչել։ Շարադրության մեջ հեղինակը նախ իր գիտեցածն է շարադրում հին և նոր կտակարանի գրքերի մասին և ապա մեջ է բերում Հովհան Ոսկեբերանից ու Եփրեմ Ասորուց բազմաթիվ քաղվածքներ։ Պատճառաց գրքի մեջ կան բացատրություններ նաև Փիլոն Թրակացու, Գրիգոր Աստվածաբանի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Դիոնիսիոս Արիսպագացու, Եւագրի, Դավիթ Անհաղթի, ինչպես նաև Դավիթ Քորայրեցու, Մխիթար Գոշի գրվածներից և կենսագրական տեղեկություններ նրանց մասին։

Աբասի որդի Գրիգորի այս աշխատության մասին 1895 թվականին լույս է տեսել մի հոդված «Արարատ» ամսագրում, որտեղ հոդվածագիր Կ. Վ.-ն նախ հատվածներ է տպագրել Պատճառաց գրքից և վերջում էլ ծանոթություն է տվել նրա բովանդակության մասին։

Նույն 1895 թվականին Հակոբոս վ. Տաշյանն իր «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» գրքի 213—233 էջերում, 47 համարի տակ, բերել է Պատճառաց գրքի իրենց մատենադարանում պահվող օրինակի նկարագրությունը և մանրամասն բովանդակությունը։ Վիեննայի ձեռագիրը 19-րդ դարի արտագրություն է, որ վերցրած է 1725 թվականի մի ձեռագրից։

[1] Գարեգին արքեպ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, հատոր Ա, Վաղարշապատ, 1928, էջ 65։ Ձեռագիր Մատենադարանի, № 1382։